

Զբոսըն սաստկութեան մեզ պատահեցաւ
Տերեւս իմ զեղեցիկ յիսնէ թափեցաւ :

Եղկել եմ դարձեալ և թըլուտական
Զի ի բէն հեռացայ թըլուտն պատուական .
Հանդիստ լունիմ ընծաւ ի քուն ' և արթնութեան
Կարծեմ թէ մերժեցաւ առ իս օր մահունն :

Լաւ է ինձ մեռնել քան թէ կենդանի .
Զի առանց քո տեսող ինձ կենաց չի պիտի .
Ի քո շատ կարօտող շունչըս կու քաղի .
Բայց հոգիս քո գալուով ընծայ և նայի :

Է ինձ խընդուն յայտը որ զժայնդ լըւայ
Զինչ որ ի յիմ շըրտիս կայր եւամ և դուսայ .
Գնացեալ յայտը յինչն և ես դուրացայ
Եւ քոյին սուրբ տեսող արժան զիս արա :

Բերեալ զնամակ վարդին ետուն պուլպուլին
Կարդաց և իմացաւ զողջունէ նորին .
Ռարեբանէր զձողին Աստուած ճըրճուելով
Եւ գտնեալ զՏեառնէ զնա պարզեւողին :

Արշնէր զանկոյն Աստուած քաղցր եղանակով
Գովէր զըբանն Աստուած նա ձայնի երգով
Բարեբանէր զձողին Աստուած ճըրճուելով
ԶԵրբորդութիւնըն սուրբ անբաւ ճառելով :

Նայէր վարդին գալուն ի մայիս ամսուն
Փափաքէր կարօտով հասանել տեսոյն
Շըրջեալ աղաղակէր ի մէջ ծառերոյն
Որոնելով ըզգարոն ի մէջ թըլեկոյն :

Քաղցրիկ ձայնի երգէ նըման հրեշտակաց
Ազաւելով հայցէր տըլողին բարեաց
Աւեր . ինձ ողորմա՛ մարդասէր Աստուած ,
Եւ կատարեմ զհայցուած թագաւոր փառաց :

Սրբունի Մարիամ կոյս Աստուածածին
Բարեխօսեա վասն իմ Որդւոյդ միանին ,
Պահել ըզմեզ այժմուս և յապաղային
Փըրկել ի տանջանաց ճըրճ գեհննին :



ՓԱՌԱԿԱՆ ՆՇԱՄԱԿԱՑ

(Աղաքան. էջ 160)

Առ Յարգ. չ. Կ. Տ. Սահակեան

Թունիս ամսի Բագմալիյի թ. 6 մէջ
կարդացի վերոյիշեալ բառերի ուղղագրու-
թեանց մասին Զեր գրածները , և առա-
ջադրած նոր ուղղութիւնը , Մեր առաջար-
կած ընթերցման դէմ , դուք երկու պատ-
ճառ տալիս էք . ա , որ « քիչ մ'անընա-

կան կերպով հեռացած են իրարմէ յատ-
կացոյցին և յատկացեալն » . մինչդեռ « ի
դաշտն փառական նշամակաց » դարձուած-
քի տեղ , « պատմական արձակի մը մէջ
կը սպասուէր աւելի ի փասական դաշտն
ճշամակաց » . Էւ թ . « Փասական »-ը ածա-
կան մը լինել կարծիք էր :

Առաջնոյն կը պատասխանեն որ հայե-
րէն շարադրութեանց անպայման ազատու-
թիւնը , լեզուի բնութիւնն , հայուն ինքնու-
րոյն մտքերի բացատրութիւնը , շատ ան-
գամ ոչ թէ « քիչ մ'անընական կերպով »
հեռացնում են բացայայտիչն ու բացայայ-
տեալը , այլ երբեմն այնքան անընական և
անորոշ լինում են միջանկեալ լրացուցիչ
պարագաների շնորհիւ , մինչեւ քուն իմաս-
տը մուկ և անհասկանալի կը մնայ , և
այդ արձակ համարձակ խօսելու և զրելու
կերպը , մեր մէջ կոշուեր է ձեռնադր շարա-
դրութիւն . ուստի « ի դաշտն փառական
նշամակաց » և « ի փառական դաշտն նշա-
մակաց » նոյն լինելէն զատ , ձեր առա-
ջարկած ընթերցումն դժբաղդարաւ « քիչ
մ'ալ ոսկեղարեան չէ » : Այլ է՝ եթէ հայե-
րէն շարադրութիւնը ունենար գաղղիական
խիստ պատճառաբանեալ ձեւագրութիւնը ,
և նոյն լեզուի յատկաբանութիւնները , յի-
րաւի « քիչ մ'անընական » պիտի լինէր
ասել « ի դաշտն փառական նշամակաց » .
որպէս խիստ անընական է գաղղիերէն
փոխանակ ասելու un clou de fer, ա-
սէինք un fer de clou կամ de clou
un fer, և այլն մինչ հայումս կ'ասենք
երկաթեայ մի գամ կամ գամ մի յերկաթոյ
(երկաթեայ) :

Բ . « Փասական » իբրեւ ածական ընդ-
ունել ոչ մի ժամանակ չեն ներեր ոչ
պարբերութեան շարադրութիւնը և ոչ պատ-
մական պարագաները : Որովհետեւ նախ ա-
սենք որ բացայայտիչ և բացայայտեալը
գտնուէն և յարմար կերպով մէկ ածակա-
նով մ'եւս տեղաւորելէն զկնի , հարկաւոր
էր ամրացնել մի երբակոյի վրայ , որպէս
զի մեր միտքն եւս այդ անանոն դաշտի
մէջ « թափառական երամակներու » ե-
տեւից յափտենական չթափառի , Հարկաւ

Տրդատ արքայական կազմութեամբ որսի գնացած ժամանակ, որոշած լինելու էր այն դաշտը ուր կային « երամակ ցուռց և կինճերու » և այդ դաշտը առանց սեփական անուան չէր կարող լինել : Հայաստանի դաշտերը շատ են և իւրաքանչիւրն յականջ յանուանէ յիշուած են պատմութեան մէջ . Ալարատեան դաշտն, Շիրակայ դաշտ, Շարուրայ, Մշոյ, Կարնոյ, Զիրաւայ և Աւարայրեան դաշտերը և այլն . ուստի Տրդատայ որսի գնացած դաշտը քաջ յայտնի պէտք է լինէր իրբեւ արքայական որսարան, և այդպիսի է ներկայանում փառակա՝ պատմական անցքերով հշուտորդաշտը, ուր կը բնակէին էլմակիներ, զեներ և Ազատ Մասեաց քաջերը : Թէպէտ բնութիւնն տուած էր Հայաստանին ճոխ որսարաններ սակայն մեր Թագաւորները գիտցան նաեւ իրենց զուարճութեան և ըզրօսանքի համար պատրաստել արուեստական որսարաններ . բաւական է յիշել Խոսրով Բ-ի տնկած մայրին որ Գառնիէն մինչեւ Դոււին պարսպոց Ազատ գետի եզերքը և լեցուց վայրենի անասուններով . բայց Տրդատայ պատրաստութիւնը այդպիսի մի տեղոյ համար շատ էին . նա աւելի յանդուգն արշաւանքներու դաշտեր պիտի գնայ, և այդպիսի մի տեղ ներկայացնում էր Մասիսու ստորոտ գտնուած մեծ շամբը, մեր Թագաւորաց սովորական որսի տեղիքը : Այս շամբը, Հայկազանց ցեղապետութեան ժամանակ, ժառանգութիւն ինկնում է Ամասիայի որդւոյն փառախին, որ « շինէ անդ առ խորշիւք լեռնոտին մեծապէս ծախիւք երկուս տունս . զմին յարեւելս կոյս մօտ յաղբերակունս աղբերն որ առ ստորոտով լերինն ելանեն » : Այս աղբիւրն և գետն, զարձեւել ըստ Պատմահօրն կոչուած է Գինա գետ . ուր է Մօրն մեծ և շամբն, կինճ և իշավայրի կամ ցիւ որսալու տեղեր : Արին փառախ բնակելով անդ, իւր անունով այդ տեղերը կոչեց փառախոտ : Իսկ Ազաթան

գեղոսի մօտ այդ տեղին կամ դաշտը կը համարինք կոչուած փառախան : Եթէ՛ ձեռագրական սխալ համարինք, շատ հեշտեւ կարելի է պնդել որ « կան » երեք տառերը շփոթուած են « Խոտ » վերջաւորութեան հետ : Նոյն իսկ տարակուսական համարմի որ փառախ մարդու անուն լինի, յորմէ և փառախոտ . Թէպէտ վերջին անունն Եղիշէի մօտ յիշուած է իրբեւ արուելի բերդ (էջ 135) : Որովհետեւ հայ և վրացի աղբերք այլազգ տան մեզի մտածել : Մինչեւ ցարդ հայ ժողովրդի մէջ գետաբերան և ճկուտ տեղեր բուսած կանանչ կակուղ երկար խոտը փառն կոչուած են (ուսկից նոյն կը մանեն ցորենի խրճեր կապելու) . նոյնպէս վրացին կանաչ խոտին յարախի ասում է, աստի կը հետեւի որ Գինայ աղբերականց կանաչ շամբը փառախոտ կոչուած լինելու էր ի սկզբան : Իսկ « լ » և « ռ » տառերի իրարու փոխանակելը յաճախ պատահող երեւոյթ մ'է : Եթէ՛ մեր ենթադրութիւնը հաւանութիւն զտնի բանասիրաց կողմէն և համարին հաստատուած որ փառախոտ և փառական նոյն են՝ ըստ ինքեան հաստատուած է որ փառական յատուկ անուն է դաշտին :

Թող զայս՝ պատմական պարագաներ եւս մեզ ածում են այդ եղբակացութեան . Հայ Թագաւորաց սիրելի դաշտը, ուր ըստ փառպեցւոյն « ոմանք զհետ ցուցն և այժեմ մանցն արշաւելով՝ զխիզախական զաղեղնաձայնն եւեթ բարբառեցին . . . և կէսք սուսերօք իրբեւ զմենամարտիկս՝ զսատկանդամ երամս վարազացն զլրիցեղեցալ սպանանեն » . (էջ 10, տող 30) շատ տխուր յիշատակներ Թողբը և պատմութեան էջերում : Ըստ առասպելին Գինայ աղբերաց ջրերու մօրեքն և շամբն Թէ և լիքն էին կինճերով և ցիւներով, և այլն, սակայն այդ եղէգնուտներին մէջ քակուած էին զեներ, մոյկեան ողիներ և քաշեր որոց բնակութիւնն Մասիսու վրայ էր : Այս տեղ Արտաւազդ Արտաշատի կամուրջն անցնելով՝ Գինա աղուանքներու մօտ որսալու կինճեր և իշավայրինք (ցիւ), ինչազարուելով ձիով հանդերձ անհետ կը

կորի կնճռաձևերի մէջ, ուր կան խորա-
խոր տեղեր և կոչուում են քոնէր, կոա-
պարիշտ ժողովուրդը չկամելով խայտա-
սակել իրանց թագաւորը՝ ներկայացնելով
սպառնուած գազաններից, վարպետու-
թեանմբ հրատարակեցին որ քաջիբ առան
տարան յազատն ի վեր ի Մասիս: Գա-
լիբը իբրեւ բարի զեւեր մարդկանց բա-
րեկամ էին, անոր համար թագաւորազունը
և կարին անձնաւորութիւնը քաջարանց և
քաջազունը կոչուէին: Թէպէտ ոմանց
թուեցաւ որ Արտաւազդ զոհ գնացած լինի
մի քաղաքական դաւադրութեան, ինչպէս
Հոմոմուլուս. բայց հաւանելի թուի պատ-
մահօր կարծիքը որ նա ի ծննդենէ եւեթ
« մոլութեամբ լեալ մինչ նովիմբ և վախ-
ճանեցաւ », (էջ 287): Մասիսու շամբի
հետ միայն Արտաւազդայ դէպքն չէ կա-
պեր դիտաց ներկայորիսը. այլ առհասա-
բակ երեւի մի ինչ որ աւանդական երեւ-
ոյթ, մի նախապաշարաւ տիրապետում
էր ժողովրդի մէջ, նաեւ յետ ցրիստոնէու-
թեան. այնպէս որ ինձ թուի թէ Պարսիկ
Շապուհ անգամ տեղեակ էր այդ զիւական
երեւոյթներին, որ « երբեմն զհետ երամա-
կաց ցուց յանդգնագոյնս արշաւեալ ընդ
խորտաբորտան և ի վիմուտ տեղիս (իմա
սո խորշիւք լեռնութիւն էջ 64) երբ նա եր-
կելիցի կանգնում է, Ատում մոկացին ծա-
նակելով ասում է. « զնա, զնա, աստուա-
ծորդիդ Պարսից եթէ այր իցես: Եւ նա
ասէ, դու երթիջիր, զի ի քարինս դիտաց է
շահատակել »: Շապուհ ոչ թէ քարերու
դժուարութենից յետ է ընկնում, այլ դե-
ւերու վախից, մի՞ գուցէ իրեն եւս պատահի
Արտաւազդի և Տրդատայ դէպքը զոր պիտի
սասնը: Եթէ Ազաթանգեղոսի գրէին գու-
շակէր թէ մի օր իւր Փառական պիտի
փրթէր Մասիսու յաւերժական կողերուց,
և ինկնար (թա)փառական (եր)ամակներու
հետ դաշտերը, անշուշտ խորհնացու պէս
մանրամասն կը նկարագրէր Տրդատայ ող-
բերգական անցքերը ըստ անուանց և ըստ
տեղեկաց:

Ուստի փոխանակ հարեւանցի գրելու,
« Այն ինչ ի կառս ելեալ կամէր թագա-

ւորն ըստ քաղաքն ելանել, անդէն վաղվա-
ղակի պատուհաս ի տեառնէ ի վերայ հա-
սանէր և հարեալ զթագաւորն պղծութեան
ի կատացն ի վայր կործանէր. և անդէն
մոռեցնէ սկսաւ, և իւրովի ուստի զիւր մար-
մինն » (Աջ. էջ 160) ըստ խորհնացուն
պիտի նկարագրէ այսպէս. « Կամեցաւ թա-
գաւորն ըստ քաղաքն ելանել. անցեալ
զկամրջան Արտաշատ քաղաքի՝ որսալ
կինն և իշավայրիս զակամբ Գինայ ի
դաշուն Փառական նշամակաց աղմկեալ
իմն ի ցնորից խելագարանաց (հարաւայ յա-
սոյն պղծութեան) ի կառացն ի վայր կոր-
ծանէր »: Թէպէտ Ազաթանգեղոս այսպէս
գրած չունի, սակայն հետեւորդ հանգա-
մանքները ցոյց կու տան որ նոյն տեղուանը
և նոյնանման դէպքերով հանդիպած է Տրդ-
դատայ արկածը: Որովհետեւ « ըստ քա-
ղաքն ելանել »-ն բաւական է մեզի ենթա-
դրելու որ արդէն կամուրջը անցած է. իսկ
հարուածից յետոյ, մարդկային բռնութենից
ելլելով « ի նմանութիւն վայրենի խղաց »,
վրայ բերում է թէ՛ իսկոյն փախչում և
մտնում է յեղեգն, Եթէ նոյն իսկ Փառա-
խոտի շամբի մէջ պատահած չլինէր դէպ-
քը, ինչո՞ւ Աջթ. նրան խոզի կերպարանը
մտցնելով, պիտի յեղեգն տանէր, որ քա-
ղաքէն շատ հեռու էր, և ոչ թէ Այրա-
բատանն դաշտի մի ուրիշ անկիւն և մեր-
ձակայ սարերը, զոր օրինակ « ի խորշս
ի խինձս Արագած մեծ և ամուր լեռան »
ըստ Բիւզանդայ: Որովհետեւ՝ կը պատաս-
խանենք՝ դիտարարարիսը, աղմկիւն ի ցնո-
րից խելագարանաց, հարկանելն այսոյն պղ-
ծորեան, Ս. Գրոց մէջ կապուած է՝ շամբի
եղեգնութիւն, մտացեալ ջրերու և ծովակ-
ներու հետ, և անբաժան է կիսններոս և
խոզերոս գաղափարից: — Այս տեղ Տրդատ
դիւահարում է, փոխում է խոզի կեր-
պարանքի և իսկոյն փախչում մտնում է
յեղեգն: Այդ դեպքը Ս. Գրոց մէջ ալ խոզի
կերպարանը զգնում են կամ նրանց մէջ
բնակում. յԱւետարանի գերգեղանացու դե-
ւերն՝ մտան խոզերու մէջ և խոզերն զա-
ռիվայրէն դիմեցին ծովակը և խեղդուեցան:

Պատմութեան պարագաները, ըստ մեր

խոնարհ տեսութեան, հաւատում են՝ որ Տրդատ նոյն և նման կերպիւ հանդիպեր է Արտաւազդայ արկածին, բայց այսու տարբերութեամբ, որ հեթանոս երկիւղածութիւնն Գողթան երգիչներու բերանն դրել է՝ քաջաց առասպելը, որոնք որսի ժամանակ յափշտակեր և տարեր են յազատն ի վեր ի Մասիս: Իսկ ըրիտոնեայ գրիչն՝ իրրեւ աստուածաստ պատիժ՝ խայտառակներ է զՏրդատ անասնոյ հաւասարեցնելով, որպէս զի յետոյ իւր Աստուծոյ ծառայի ձեռքով հրաշագործել տայ անդրէն դարձուցանելով մարդկային կերպարանքի: Եւ Նարուզդոնոսորի նմանութեամբ Տրդատայ հիւանդութեան մասին խօսած են ուրիշները, և գտել են բարոյական և հոգեկան ճնշման այլասերումն: Բարոյական հիւանդութիւն որ երբեմն ֆիզիկապէս փոխում է փոքր ի շատ է կերպարանքը, և կամ հիւանդոտ երեւակայութիւնը թուացնում է որ ինքն այս ինչ անասնոյ կերպարանքը ստացել է: Տրդատին՝ ժողովուրդը նկատելով տուփենի մեծ նամարտի բռնութեամբ կոյս օրիորդի հետ, ինչ աւելի նմանութիւն կրնային գտնալ նորա այդ անբարոյական և անխիղճ եղբան, քան թէ ներկայացնել այդ անարգ անասնոյ կերպարանքով՝:

Արտաւազդի և Տրդատայ անցքերը լուսարանելու համար, մեզ թուի, հարկաւոր է ի նկատի առնուլ բնաբանական պատճառներ ևս, Դժբաղդարար միջնեւ չալդ գիտական հետազոտութիւն եղած ցէ այդ փառախոտի շամբի եղէգնութի մորացեալ ջրերու և բոյսերու և սողուններու¹ և միջատներու վրայ: Կան արդեօք փաստակար անասուններ, որոց խայթոցից ժամանա-

կաւոր թունաւորումն և խելացնորութիւն պատճառի. զոր օրինակ « մալորիա » ի կոչուած մեղունն, պատճառ է այլ և այլ տեսակ դողերու. կարելի է դողցնել, կարելի է նաեւ խելագարեցնել, խելագարեցնող բոյսեր կան և ամենքից անփառաւարդ աղբաւրն է, որոյ սերմը փոռուկի մէջ է և մանր սպիտակ գինձեր են, որուն փխրա եւս կ'ասեն, բաւականին համիլ է. երեխայք շատ անգամ ուտելով՝ կատարեալ խելագարութեան մէջ են ընկնում, աւելի դիւանարութեան նշաններ երեցնելով, այսինքն ինկնալ, ծափ զարնել, ծեծել, փետել մազ, հալաւ և այլն. բայց այդ բոլորը տեսում է մի օր, երկու օր յետոյ կամաց կամաց խելացիանում է և ստանում իւր բնական կացութիւնը: Միթէ այդպիսի մի բնական պատճառ չէ՞ր կարող խելացնորեցնել Արտաւազդին, որ ինքն իրանից դուրս ըջելով ձին, ինկնում է խոր տեղ և խորասուզում է: Իսկ Տրդատ կառքէն է վեր ընկնում (թէ և որսի գնացողն հագիւ թէ կառք նստած լինէր), նոյնպէս մոլեգնութեան մէջ, ինկնում է եղեգնութի ցեխի մէջ, և այդ ցեխոտ պատկերը առասպելաբար նմանցնում են նոյն տղմերի մէջ թաւալող կիններուն և խոզերուն: Յետոտ զրահները, սաղաւարտն կապարճն, աղեղն և նետերն ու նիզակ և գեղարդն, երեւակայութիւնից խոզերու կնդակ, կնճիթ ժանիք մեծամեծք և « խոզանաստեւ թաւացեալ » են դառնել. դէպքը թուացեր է մի ինչ որ իսկական կերպարանափոխութիւն և աստուածային պատուհաս՝:

Թէպէտ բաւականին շեղեցանք ուղղակի

1. « Իսկ թագաւորն Տրդատ դեռ եւս յայնժամ էր յամնայն կերպարանս խոզի, բայց ի մարդկապէսն խօսեւոյ. և կնդակը ձեռացն և ոտիցն իրրեւ խոզի, և զէմք երեսացն կնճթացեալ և ժանիք մեծամեծք իրրեւ վարազաց և խոզանաստեւ թաւացեալ զամնայն մարմնովն » (էջ 569) :

2. Այս մի տեսակ փոքրիկ իժ որոյ խածուածքից մարչ չի մեծում, բայց բանականութիւնը գրեթէ կորս-

ւում է անբժշկելի կերպով. բնագիտութիւնը ուրիշ օրինակներ եւս կրնայ ցոյց տալ :

3. Դիւս. « Ընդօրինակողը պակասաւոր ձեռագիր մը ունեցած լինելուն » փաստ՝ հարկաւոր էր վեց օրինակ ձեռագրաց համեմատութիւնը և որոշումը նրանց իբրեւ մէջ ունեցած աղբորսի աւել պակասին. Տրդատի բնական պատճառներից մոլեգնութեան մէջն ինկնալն կարելի է հաստատել նաեւ այն հանգամանքից որ « քաղաքի մէջ

առաջարկեալ հարցէն, սակայն մի նպատակի ձկնում էինք, պատմական պարագաներուց եզրակացնել որ « փառական » յատուկ անուն է, և թէ փառական դաշտը, այն է, ուր դեմքն է ելմակիներ բնակւում են կամ քաշեր ըստ առասպելին, և թէ ուր Արտաւազդ խելագարուել էր, հոն նաեւ Տրդատ մուկեցնել է, և թէ փառականը նոյնանում է փառախոտի հետ¹։ Այսու պատմական մի կարեւոր բայց մութ կէտը լուսարանւած կարելի է համարել, այն է Տրդատի մուկեցնութեան ճիշդ տեղը։ Ի նպաստ մեր կարծեաց աւելորդ չեմ համարում հրաւիրել վերջին անգամ մեր յարգելի ընդդիմաբանի ուշադրութիւնը յունարէն Ագաթանգղոսի ընթերցուածի վրայ. « Παράχαλς εὐδαλν » . փառական նիս եմակոն. եթէ զատենք լինի փառական իսեմակոն . որ է փառական իսեմակոն : Համեմատելով յն. ἦ = հն որպէս Հերակլէս. նոյնպէս յն. ζ = ս և շ. զոր օրինակ Սամուէլ — Շամուէլ, Յեռու — Յեռուլլ : Ըստ պատմական բանաձեւս փառական հեշեմակոն : Այս բառը մեր ստուգած էինք վրացերէն էլմակի բառից որ դեռ կը նշանակէ, և ասած էինք որ ճիշդ փառական դաշտի մէջ դիւհարեցաւ Տրդատ : Արդ պէտք է ասեմ որ ոչ միայն վրացիք, այլ նաեւ հայք եւս փառականի դեմքուն կամ

քաջերուն նոյն անուամբ կոչէին « հեշեմակի » . և թերեւս աւելի իմն հնութիւն ունենայ այդ բառը. վասն զի եղբնիկ խօսելով Պարսից քէշի մասին Եղպէս կոչում է Արշնի երկրպագուներին . « որք յանդիմանէին զհեշեմակոն » (էջ 236) : Եթէ իբրեւ կրօնական տեքմին ծանօթ էր Հայոց « հեշեմակ », ինքն ըստ ինքեան լուծւում է հարցը և « փառական նշանակաց » պէտք է կարդալ « փառական հեշեմակաց » :

Հ. ԳԱՐԻԲԵԼ ՆԱԼԱՊԵՏՅԱՆ

Ա. ՊԵՏՐՈՍԻ ՎՐԱՅ

Առ Գ. Դ. Բասմաչեան

Յիպրոսի այս թագաւորն վրայ, որ մեր գրականութեան մէջ քիչ ծանօթ է, յօդուած մը գրած ըլլալով (Տես Բազմապէս, 1907 թիւ 6) Յաւնական էի մահն այն շատ հետաքրքրական համագամքը թէ Հայոց այ թագաւոր պսակուած է .

Յօդուածիս հրատարակութենէն զոնքէ ամիս մը վերջ երկտող մը կ'ընդունիմ ծանօթ բանասէր Գ. Բասմաչեանէ, յորում կը շնչտէ թէ « Գետրոս Ա երէջ Հայոց թագաւոր չէ պսակուած » իմն որ ես համարած էի .

Ասիկայ ինծի փաշեցուցիչ յայտնութիւն մ'եղաւ, այնչափ աւելի որ իմ յարգը թղթակիցս փաստ մը չէր մշտնական .

Գարտը կը համարիմ իմ կարծիքիս վրայ հաստատում կենալ, քանի որ փաստեր ունիմ մա. Յաւանդ² որոնք դեռ չեն ջրուած . Այնչափ կը գրէ թէ (Միստան էջ 560) 1868 տարուայ « Հայք հրաւիրեն զԳետրոս զայ թագաւորել ինքեանց » : Այսչափ վկայութիւն մը բաւական չէր ամուշտ զԳետրոս Հայոց թագաւոր պսակուած դնելու . Բայց ամասնիկ գէտաւ, առնելով Մշտնութեան որ Գետրոսի պատմիչն ու ժամանակակիցն է, յետ զայն 1868ին ճիշդագոյն ցամաքորդութեան մէջ դնելու կը գրէ (էջ 67) թէ « իր հոռւ բնական միջոց, հայ պատգամաւորներ, դիմելով Ասիոյ այն կողմերէն զորս թուրք հրոսակներ կը բաժնէին մնացեալ քրիստոնեայ աշխարհէն, եկան ընծայելու իրեն թագը » Գետրոս ընդունեցաւ և եղաւ այն ատեն թագաւոր Յիպրոսի, Ներսաւղէմի և Հայաստանի » :

Յետ այսպիսի վկայութիւններ ունեմալու կարծեմ կրնալ գրուիլ « Հայոց թագաւոր պսակուած ցաւ » բացատրութիւնը մոյմ իսկ թէ եւ նիթապէս պահպարտութեան համըղէք կատարուած ըլլալ, եթէ զայս կը հասկնայ Բասմաչեան .

Այսուհանդերձ կը փափաքիմ կարծել որ յարգը բամբասէր փաստներու վրայ հաստատուած կը համարի թէ « Գետրոս Ա երէջ Հայոց թագաւոր չէ պսակուած » :

Հ. Ն. ԱՆԿԵՆՅԱՆ

եղած մարդիկ « Նոյնպէս թագաւորի ընտանեք » այսինքն մերմուտները և ծառաները և սպասաւորները « Գիւտաբէք » եղած էին . այսինքն այն ամէնք որ իբրեւ հետեւներ (suite) Տրդատայ հետ որի գնացեր էին :

1. « (Թա)փառական » ածականը, որ հարաբարութեամբ մուծեր էք Ձեր կարծեաց պաշտպանութեան, հաւատարմակէտ կու գայ հաստատուել մեր կարծիքը, ակամայ զուգահեռութեամբ : Վրացիներն մէջ « Թա » լեռ կը նշանակէ, բայց իստակցութեան մէջ « մ » անգլալի է, միայն լուծւում է « Թա » զոր օրինակ « (Թ)թա ծմիւղո » — լեռան սուրբ . (Մ)թէթ . և այլն ուստի Ձեր (Թա)փառական ածականը աւելի է մեզ « Մ » (Թա)փառական, այսինքն լեռան փառական :

Խոսքով Բ հաւանական է որ ոչ — ընկալմ և դիցակամ պատճառներէ ստիպուած թողուց փառական դաշտը և իրեն համար նոր որսարան կապեց, որոյ մարդութեան համար, ըստ անկարկութեան խօսքնաջուր :